ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ՏԱՐՈՒՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ (2008-2015)

Ֆիրդուս Զաքարեան
ministry@mindiaspora.am

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը Սիրիայի հայ համայնքի հետ մշտական կապի եւ գործակցութեան ապահովման աշխատանքներն իրականացրել է հետեւեալ ուղղութիւններով՝

- համայնքի հետ գործակցութեան ծրագրերի մշակում եւ իրականացում.
- համայնքային նշանակութեան խնդիրների ուսումնասիրութիւնների, վերլուծութիւնների եւ լուծման մեթոդների մշակում.
- Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման նպատակով սիրիահայ համայնքի ներգրաւուածութեան ընդլայնում համահայկական ծրագրերին, մասնաւորապէս՝

  ա) Սփիւռքի երիտասարդների հայրենաճանաչութեան «Արի Տուն» ծրագիր.- 2009ին՝ 1 մասնակից, 2010ին՝ 1 մասնակից, 2011ին՝ 7 մասնակից, 2012ին՝ 40 մասնակից:

  բ) 2011ին Երեւանում Սփիւռքի կազմակերպութիւնների ղեկավարների եւ ներկայացուցիչների համահայկական չորրորդ համաժողովին մասնակցել է Սիրիայի հայ համայնքի 23 ներկայացուցիչ:

2011ին ՀՀ Սփիւռքի Նախարարութեան հովանաւորութեամբ եւ պատուէրով ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտը լոյս է ընծայել *Սիրիայի Հայ Համայնքը. Արդի Հիմնախնդիրներ* գիրքը:

Մինչեւ 2011 Սիրիայում բնակւում էր շուրջ 80,000 հայ, որից 60,000ը՝ Հալէպում: Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետեւանքով հայերից շատերը լքել են երկրորդ հայրենիք դարձած Սիրիան. շուրջ 15,000-20,000ը մեկնել է Լիբանան, մօտ 13,000ը՝ այլ երկրներ: 2012-15ին ՀՀ է եկել շուրջ 17,000 սիրիահայ, որից շուրջ 4000ը մեկնել է այլ երկրներ, այդ թւում վերադարձել են Սիրիա: Ներկայումս Հայաստանում է գտնւում մօտ 13,000 սիրիահայ:

Սիրիայի քաղաքացիական պատերազմի ընթացքում (2012-15), զոհուել է 113 սիրիահայ, վիրաւորուել՝ 300: Աւերուել եւ թալանուել են հայկական եկեղեցիներ, մշակութային եւ կրթական հաստատութիւններ: Այսօր Սիրիայում բնակւում է շուրջ 25-30,000 հայ, որից շուրջ 15-20,000ը՝ Հալէպում:

ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԱԾ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԵՐ (2012-15)

2012-15ին իրականացուել են Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետեւանքով ՀՀ տեղափոխուած մեր հայրենակիցների աջակցութեան

ծրագրեր եւ միջոցառումներ, լուծուել են նրանց համար կենսական նշանակութիւն ունեցող գրեթէ բոլոր հարցերը:

1) Կազմակերպչական քայլեր.

ՀՀ Նախագահի որոշմամբ՝ Հայաստան տեղափոխուած սիրիահայերի աջակցութեան ծրագրերը համակարգում է ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը:

2012ի ամռանը ՀՀ Սփիւռքի նախարարի հրամանով ստեղծուել է սիրիահայերի հիմնահարցերով զբաղուող աշխատանքային խումբ:

ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ստեղծուել է Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող (ՍՀՀ) միջգերատեսչական յանձնաժողով՝ ՀՀ Սփիւռքի նախարարի ղեկավարութեամբ, ՀՀ պետական մարմինների ղեկավարների տեղակալների մասնակցութեամբ: 2012 Օգոստոսից մինչեւ 2015ի Մայիս կայացել է ՍՀՀ միջգերատեսչական յանձնաժողովի 19 նիստ, քննարկուել է 65ից աւելի հարց, մշակուել դրանց լուծման կառուցակարգերը:

2012 Հոկտեմբերին ստեղծուել է «Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող Կենտրոն» (ՍՀՀԿ) հասարակական կազմակերպութիւնը, որի հիմնադիր բոլոր անդամները սիրիահայեր են: Կազմակերպութեան միջոցով իրականացւում են մարդասիրական աջակցութեան ծրագրերը՝ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան համակարգմամբ, համահայկական, միջազգային եւ բարեգործական կազմակերպութիւնների հետ համագործակցութեամբ:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՒԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Սիրիահայերին աջակցելու նպատակով կատարուել են փոփոխութիւններ մի շարք իրաւական ակտերում, այդ թւում՝ ՀՀ 1 օրէնքում, ՀՀ կառավարութեան 10ից աւելի որոշումներում, մի շարք գերատեսչական ակտերում:

Արդիւնքում՝

Սիրիահայերը ՀՀ մուտքի արտօնագիր կարող են ստանալ ՀՀ սահմանային կէտերում.

Հնարաւորինս հեշտացուել եւ արագացուել է ՀՀ քաղաքացիութիւն ստանալու գործընթացը.

ՀՀ անձնագրի յանձնումը եւ երդման արարողութիւնը կարող է իրականացուել Սիրիայում եւ Լիբանանում՝ ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններում կամ հիւպատոսական հիմնարկներում.

Անձնական ինքնաշարժները մինչեւ 2015 Դեկտեմբերի 31ը ազատւում են համապատասխան պետական տուրքերից.

ՀՀ մուտքի արտօնագրեր եւ կեցութեան կարգավիճակ ձեռք են բերում առանց նախատեսուած պետական տուրքերի վճարման.

Վարորդական վկայականները փոխանակւում են ՀՀ ազգային վարորդական վկայականներով՝ առանց որակաւորման քննութիւնների:

ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԴԻՒՐԱՑՈՒՄ

Ծննդեան վկայականի չլինելու դէպքում ընտանեկան գրքոյկն ընդունւում է որպէս հայութիւնն ապացուցող փաստաթուղթ:

2012-15ին ՀՀ քաղաքացիութիւն է ստացել Սիրիայի՝

- 2010ին - 422 սիրիահայ եւ լիբանանահայ.
- 2011ին - 2983 սիրիահայ եւ լիբանանահայ.
- 2012ին - 5026 սիրիահայ.
- 2013ին - 4150 սիրիահայ, 2575 լիբանանահայ.
- 2014ին - 3212 սիրիահայ
- 2015ին – 969 սիրիահայ

նրանց մի մասի անձնագրերը յանձնուել են Սիրիայում կամ Լիբանանում՝ ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններում:

Իրականացուել է Սիրիայում ստացած 12ամեայ կրթութեան վկայականների եւ համալսարանական դիպլոմների ճանաչում:

ԿԱՑԱՐԱՆՈՎ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն եւ ՍՀՀԿ հասարակական կազմակերպութեանը դիմել է 1686 ընտանիք՝ 4000ից աւելի անդամով, ժամանակաւոր կացարանով կամ բնակարանային վարձով ապահովելու խնդրանքով.

Կացարանով կամ բնակարանների վարձավճարներով ապահովուել է՝ տարբեր ժամանակահատուածներում շուրջ 1000 ընտանիք՝ ՀՀ Տարածքային Կառավարման Նախարարութեան Միգրացիոն Պետական Ծառայութեան, ՀԲԸՄի, Հայ Կաթողիկէ Եկեղեցու եւ «Հայկական Կարիտաս» բարեգործական կազմակերպութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, «Առաքելութիւն Հայաստան» բարեգործական կազմակերպութեան (ՄԱԿ ՓԳՀի ֆինանսաւորմամբ), անհատ բարերարների աջակցութեամբ:

ՀՀ Նախագահի յանձնարարութեամբ մեկնարկել է բնակարանաշինութեան «Նոր Հալէպ» ծրագիրը Աշտարակ քաղաքում, որի համար արձանագրուել է 650 սիրիահայ ընտանիք՝ 3500 անդամով: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է 25 մլն. ԱՄՆ դոլար, որի հաւաքագրումն այս պահին նպատակայարմար չի համարւում, քանի որ դրանք առաջին հերթին պիտի ուղղուեն Սիրիայում ապրողների խնդիրների լուծման ուղղութեամբ:

ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Աշխատանքի տեղաւորման հարցում աջակցութեան խնդրանքով ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն դիմել է 1950 սիրիահայ:

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը համագործակցում է ՀՀ Աշխատանքի եւ Սոցիալական Հարցերի Նախարարութեան «Զբաղուածութեան Պետական Ծառայութիւն» գործակալութեան, պետական պատկան այլ մարմինների եւ հայաստանեան 170 ձեռնարկութիւնների ու անհատների հետ: Պարբերաբար կազմակերպւում են աշխատանքի տօնավաճառներ, բազմաթիւ սիրիահայեր ընդգրկուել են մասնագիտական ուսուցման ծրագրերում:

Համատեղ աշխատանքների արդիւնքում աւելի քան 1200 սիրիահայ ապահովուել է աշխատանքով:

Հայաստանի Փոքր եւ Միջին Ձեռնարկատիրութեան Զարգացման Ազգային Կենտրոնն իրականացնում է ծրագիր, որի շրջանակներում կազմակերպւում են դասընթացներ ՀՀ մաքսային եւ հարկային օրէնսդրութեան վերաբերեալ, իրականացւում են անհատական խորհրդատուութիւններ: Մինչ այժմ գործարարութեան զարգացման նպատակով կազմակերպուել են երկամսեայ եօթ դասընթացներ, որոնց մասնակցել են 149 սիրիահայեր, մշակուել են 100 բիզնէս ծրագրեր, որոնցից առաւել յաջողուած 74 ծրագրի հեղինակները ստացել են վարկեր՝ արտօնեալ պայմաններով (մինչեւ 5մլն. ՀՀ դրամ (11.000 ԱՄՆ դոլար)՝ 4% տոկոսադրոյքով, 5 տարի մարման ժամկէտով): Տրամադրուած վարկերի ընդհանուր գումարը կազմում է մօտ 333 մլն. ՀՀ դրամ (մօտ 774,500 ԱՄՆ դոլար):

Կազմակերպուել են սիրիահայ գործարարների հաւաք-խորհրդակցութիւններ: Իրականացուել է 40 սիրիահայ գործարարների հանդիպում-քննարկումը ՀՀ Նախագահի հետ բժշկական կենտրոնների, ոսկերչական արտադրամասերի եւ արտադրատարածքների հիմնման խնդիրների վերաբերեալ: Սիրիահայ գործարարները հանդիպել են նաեւ ՀՀ Էկոնոմիկայի եւ Գիւղատնտեսութեան նախարարների հետ: Ծանօթացել են յաջողուած բիզնէս-ծրագրերին:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն առողջապահական խնդիրներով դիմել է շուրջ 2200 սիրիահայ:

Երեւանի քաղաքապետի եւ ՀՀ Առողջապահութեան նախարարի որոշմամբ երեւանաբնակ սիրիահայերն ստանում են անվճար պոլիկլինիկական ծառայութիւններ: Պոլիկլինիկական ծառայութիւններից օգտուել է 1000ից աւելի սիրիահայ:

2012-15ի ընթացքում դժուարամատչելի հետազօտութիւններ է անցել եւ հիւանդանոցային բժշկական սպասարկում ստացել 1128 սիրիահայ, որոնցից 608ը 2012-13ին, 380ը՝ 2014ին, 140ը՝ 2015ին: Այդ ընթացքում առողջապահական խնդիրների լուծման համար ՀՀ ամավարկից ընդհանուր առմամբ յատկացուել է 100 մլն. ՀՀ դրամից աւելի գումար:

Իրականացուել է 22 սիրիահայի սրտի վիրահատութիւն՝ ՀՀ Առողջապահութեան Նախարարութեան, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աջակցութեամբ:

Սիրիահայերի առողջապահական խնդիրների հարցում աջակցութիւն է ցուցաբերում նաեւ «Առաքելութիւն Հայաստան» ԲՀԿն, որն աջակցում է հիմնականում պետպատուէրի շրջանակներում չընդգրկուած հետազօտութիւնների իրականացման, համավճարի տրամադրման, դեղօրայքի ձեռքբերման եւ այլ հարցերում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն կրթական հարցերով դիմել է շուրջ 2200 սիրիահայ:

Սիրիահայ երեխաների մանկապարտէզ ընդունելու դիմումները քննարկւում են արտահերթ: Երեւանի եւ մարզերի մանկապարտէզներ յաճախում է սիրիահայ շուրջ 300 երեխայ:

2012ին Երեւանի քաղաքապետարանի աջակցութեամբ եւ «Կիլիկեան Բարեսիրական Միութեան» հովանաւորութեամբ Երեւանի Նար Դոսի անուան թիւ 14 դպրոցում սիրիահայ երեխաների համար ստեղծուել է հիմնական դպրոց (1-9րդ դասարան՝ Սիրիայի հայկական դպրոցների ծրագրով) այն երեխաների համար, ում ծնողները իրավիճակի բարելաւումից յետոյ նպատակ ունէին վերադառալ Սիրիա: Ներկայումս, հաշուի առնելով Սիրիայում իրավիճակի վատթարացումը, սիրիահայերի մեծ մասը որոշել է մնալ Հայաստանում: Նրանց երեխաները սովորում են Հայաստանի հիմնական եւ աւագ դպրոցներում:

Հայաստանի հիմնական եւ աւագ դպրոցներում սովորում է շուրջ 1000 սիրիահայ աշակերտ:

Բարձրագոյն կրթութիւն

Սիրիահայերի ընդունելութիւնը ՀՀ բուհեր իրականացւում է հեշտացուած կարգով:

2012-13 ուսումնական տարում շուրջ 350 սիրիահայ ուսանողի վարձավճարները փոխհատուցուել են ՀՀ կառավարութեան եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աջակցութեամբ:

2013-14 ուսումնական տարում շուրջ 400 ուսանողների վարձավճարները փոխհատուցուել են ՀՀ կառավարութեան, ՀԲԸՄի, Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան եւ Քուէյթի կառավարութեան ֆինանսական աջակցութեամբ:

2014-15 ուսումնական տարուայ 420 ուսանողների վարձավճարները փոխհատուցւում են ՀՀ կառավարութեան, ՀԲԸՄի, Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան ֆինանսական աջակցութեամբ:

Դասընթացներ եւ վերապատրաստումներ

ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Սփիւռքահայերի Ինտեգրման Ծրագիր 2012»ի շրջանակներում կազմակերպուել է արեւելահայերէնի մէկամսեայ արագացուած դասընթաց 60 սիրիահայերի համար:

2013 Ապրիլի 15ից Մայիսի 15ը Հայաստանի Կենտրոնական Բանկի հետ համատեղ կազմակերպուել է մէկամսեայ դասընթաց սիրիահայ 40ից աւելի հաշուապահների, տնտեսագէտների, բանկային գործի մասնագէտների համար:

2014 ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան աջակցութեամբ 60ից աւելի բժիշկներ մասնակցել են մասնագիտական վերապատրաստման դասընթացների Երեւանի Մ. Հերացու Անուան Պետական Բժշկական Համալսարանում:

2013ին ՄԱԿի Փախստականների Հարցերով Գերագոյն Յանձնակատարի հայաստանեան գրասենեակի հետ համագործակցութեամբ 2013-2014ին իրականացուել է «Արեւելահայերէնի եւ ռուսերէնի անվճար դասընթացներ սիրիահայերի համար՝ առանց տարիքային սահմանափակման» ծրագիրը:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2012ի Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին կազմակերպուել է Հալէպից եւ Դամասկոսից 427 սիրիահայ երեխաների ամառային հանգիստը՝ Հանքաւանի «Լուսաբաց» եւ «Յասմիկ» ճամբարներում: Երեխաների տեղափոխումը հոգացել են բարերարներ Հրայր Յովնանեանը, Արա Աբրահամեանը, Հայբիզնէսբանկն ու Պրոմեթէյ Բանկը:

2012ի Սեպտեմբերին կազմակերպուել է 150 սիրիահայ երեխաների ամառային հանգիստը ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Արի Տուն» ճամբարում:

2013ին ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը կազմակերպել է սիրիահայ 650 երեխաների եւ պատանիների ամառային հանգիստը՝ Լոռու մարզպետարանի, «Երիտասարդ Մարդկանց Քրիստոնէական Ասոցիացիա» Հայկական Ազգային Միութեան (YMCA), Հայ Կաթողիկէ Եկեղեցու «Տիրամայր Հայաստանի» կուսաստանի, ՍՀՀԿի, UNICEF, Save the Children եւ World Vision կազմակերպութիւնների հետ համագործակցութեամբ: Կազմակերպուել է նաեւ ամառային դպրոց նախադպրոցական տարիքի երեխաների համար, ուսուցիչների վերապատրաստում:

Սիրիահայ երեխաները մասնակցել են Ամանորեայ միջոցառումների. 2012-13ին՝ շուրջ 1000ը, եւս 1000ական՝ 2013-14ին եւ 2014-15ին: Երեխաները մասնակցել են նաեւ նախագահական պալատում կազմակերպուած Ամանորեայ միջոցառմանը, հանդիպել նախագահ Սերժ Սարգսեանի եւ առաջին տիկին Ռիտա Սարգսեանի հետ:

Հայաստանի «Դինամо» մարզական հասարակական կազմակերպութիւնը սիրիահայ երիտասարդներին ընձեռել է 10 մարզաձեւերով անվճար մարզուելու հնարաւորութիւն:

Ստեղծուել է ՀՀ բուհերի Սիրիահայ Ուսանողների Խորհուրդը՝ իւրաքանչիւր բուհում համակարգող անդամներով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2012 Հոկտեմբերին կազմակերպուել է սիրիահայերի «Կռունկ» Երգչախմբի համերգը (ղեկավար՝ Շահէ Քեշիշեան):

2013 Մայիսին կազմակերպուել է Հայաստանում բնակուող սիրիահայ սիրողական 40 կատարողների «Կարօտ» Երգչախմբի համերգը՝ ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ Ժիրայր Ալթունեանի ղեկավարութեամբ եւ Թաթուլ Ալթունեանի Անուան Հայաստանի Երգի-Պարի Վաստակաւոր Անսամբլի մասնակցութեամբ:

Աջակցութիւն է ցուցաբերուել «Կռունկ» Երգչախմբին, որը մասնակցել է ՀՀ ՍՆ «Կոմիտաս Վարդապետ» փառատօնին:

2013 Դեկտեմբերին կազմակերպուել է «Նոր Կեանքին Ընդառաջ» խորագրով համերգը՝ սիրիահայ եւ հայաստանցի արուեստագէտների մասնակցութեամբ:

2014 Յունիսին կազմակերպուել է սիրիահայերի մանկապատանեկան «Շառաւիղ» երգչախմբի համերգը՝ նուիրուած Երեխաների Պաշտպանութեան Միջազգային Օրուան:

2014 Օգոստոսին աջակցութիւն է ցուցաբերուել «Քեսաբ Հայրենակցական Միաւորում» ՀԿի կազմակերպած՝ Քեսաբի վերականգնմանը նուիրուած բարեգործական համերգի իրականացմանը:

2014 Օգոստոսին կազմակերպուել է «Երգում են 70ականների Երեւանը եւ Հալէպը» խորագրով համերգը՝ հայաստանցի եւ սիրիահայ արուեստագէտների մասնակցութեամբ:

2014 Դեկտեմբերի 22-24ին իրականացուել է երեք փուլից բաղկացած «Պարգեւի՛ր ուրախ Ամանոր» ծրագիրը, որի շրջանակներում հոգեւոր կառոյցները, համահայկական, միջազգային, հասարակական կազմակերպութիւնները, հայաստանեան ձեռնարկութիւնները, սիրուած արուեստագէտներն ու տարբեր անհատներ նուէրներ էին պատրաստել սիրիահայ, իրաքահայ եւ ուկրաինահայ երեխաների համար:

2012-15ին կազմակերպուել է «Սիրիահայ Մշակոյթի Շունչը Երեւանում» խորագրով 9 ցուցահանդէս-տօնավաճառ՝ նուիրուած Հայ Եկեղեցու Տաղաւար եւ Հայ ազգային տօներին, սիրիահայ ձեռագործների եւ հրուշակագործների մասնակցութեամբ:

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը շարունակում է համագործակցութիւնը նաեւ սիրիահայերի՝ Հայաստանում ստեղծուած ՍՀՀԿ, «Հալէպ» Հայրե-

նակցական Բարեսիրական, ինչպէս նաեւ «Քեսաբ» Հայրենակցական Միաւորում հասարակական կազմակերպութիւնների հետ:

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը շարունակում է համագործակցել նաեւ սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղուող համահայկական եւ միջազգային կազմակերպութիւնների հետ՝ ՍՀՀԿի հետ միասին համակարգելով այլ կազմակերպութիւնների («Հայկական Կարիտաս», Հայկական Կարմիր Խաչի ընկերութիւն, «Առաքելութիւն Հայաստան», «Օքսֆամ Հայաստան» եւն.) կողմից իրականացուող ծրագրերի բաղադրիչների, ինչպէս նաեւ շահառուների ընտրութիւնը:

Report on the Work Done by the Ministry of the Diaspora Regarding the Syrian-Armenian Community in Armenia (2008-2015)

(Summary)

Firdus Zakarian
ministry@mindiaspora.am

Some 15-20,000 Syrian-Armenians have taken refuge from the war waging in Syria in the Republic of Armenia. Currently there are 13,000 Syrian-Armenians in Armenia.

The paper is an extensive report on the work the Ministry of the Diaspora of the Republic of Armenia, conducted between 2008 and 2015 with the Syrian-Armenians who left Syria because of the ongoing fighting in the country.

The Ministry's initial efforts targeted certain basic issues, namely how to cooperate with the community, survey the difficulties, analyse them and develop methods to resolve them, and incorporate their results in pan-Armenian projects like youth activities, pan-Armenian conferences, and publishing of studies on the issues the community faces.

The report details the efforts the state has made regarding the Syrian-Armenian community of Armenia through the Minsitry of the Diaspora, which is the coordinator of the efforts and projects produced and conducted by various departments of the government. The efforts include the establishment of an ad hoc team, an interministerial commission, and a coordinating body composed of Syrian-Armenians. Among the practical efforts, the report highlights the easing of visa and naturalization procedures, entitling Syrian-Armenians to use their Syrian cars in Armenia for a period of time without any taxation, providing them with accommodation, health services, job placement services, and legal advice, channeling financial aid and relief to the needy, providing credit to launch businesses, providing free courses to help them integrate into local society, settling them in agricultural areas for land cultivation, providing the children with relevant education and covering the tuition fees of 350 university students, incorporating Syrian-Armenian youth in relevant projects, organizing fund raising cultural events, etc.